Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

462

տրիճ «Ս. Խաչեաց եւ Ընկ.» Ընկերութեան

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԿԱՊԻՏԱԼ

(8)

3К13
Ա-31

26 JUN 2013

2005

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

4 NOV 2009

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ
ԵՎ
ԿԱՊԻՏԱԼ

Թարգմ. Ատ. Շահումեան

Հրատարակութիւն
«ԱՏ. ԷՔՍԻՅԵԱՆ ԵՒ ԸՆԿ.»
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Յատուկ գրատարով Հռիփսիմէ Ծատուրեանի
յիշատակին

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Բեռ. Պետ. Գրադարան
ՀԱՅԱՍ-ՍՏԱՆ

1906
Էլեկտրաշարժ տպարան «ՀԵՐՄԱՆ» բելբ.
Մադաթեան փողոց 6
ԹԻՖԼԻՍ

462

Дозволено цензурою. Тифлисъ, 20 марта 1906 г.

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԿԱՊԻՏԱԼ

I.

ԻՆՉ Է ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԵՒ ԻՆՉՈՎ Է ՆԱ ՈՐՈՇԻՈՒՄ

Եթէ հարցնէք բանուորներին. «Ոքքա՞ն է ձեր աշխատավարձը», մէկը կպատասխանէ ձեզ. «Ես ստանում եմ իմ բուրժուաից օրական 1 մարկ *)», միւսը կպատասխանէ. «Ես ստանում եմ օրական 2 մարկ» և այլն։ Նայած աշխատանքի զանազան ճիւղերին, որտեղ նրանք աշխատում են, նրանք կասեն ձեզ զանազան գումարներ, որ իրանք ստանում են իրանց բուրժուաներից որոշ աշխատանք կատարելու համար, օրինակ—մի արշին կտաւ գործելու կամ մի տպագրական թերթ շարելու համար։ Չնայած այդ գումարների տարբերութեանը, նրանց պատասխանները կմիանան մի կէտում. աշխատավարձը—այդ՝ փողի այն գումարն է, որ կապիտալիստը վճարում է բանուորներին որոշ ժամանակամիջոց աշխատելու կամ մի որոշ գործ կատարելու համար։

Կապիտալիստը, թւում է թէ գնում է փողով նրանց աշխատանքը։ Իսկ նրանք փողով ծախում են կապիտալիստին իրանց աշխատանքը։ Բայց այդ միայն թւում է այդպէս։ Իրապէս նրանք ծախում են կապիտալիստին փողով ոչ թէ իրանց աշխատանքը, այլ ի-

*) 1 մարկը մօտաւորապէս 46 կոպ.։

բանց աշխատանքի ոյժը կամ ուրիշ խօսքով, իրանց բանուորական ոյժը։ Այդ բանուորական ոյժը կապիտալիստը գնում է մի օրով, մի շաբթով, մի ամսով և այլն։ Իսկ գնելուց յետոյ, նա գործադրում է այդ ոյժը, ստիպելով բանուորներին աշխատել որոշ ժամանակամիջոց։ Այդ նոյն փողով, որ կապիտալիստը վճարում է բանուորական ոյժի համար, օր. 2 մարկով, նա կարող էր գնել 2 ֆունտ շաքար կամ մի ուրիշ որև է ապրանք որոշ գնով։ Երկու ֆ. շաքարի համար վճարած 2 մարկը կազմում է շաքարի գինը։ Այն 2 մարկն էլ, որ կապիտալիստը վճարում է բանուորական ոյժի 12-ժամեայ գործադրութեան համար, կազմում է 12-ժամեայ աշխատանքի գինը։ Այդպիսով, բանուորական ոյժը ճիշտ նոյն տեսակ մի ապրանք է, ինչպէս շաքարը, միայն՝ նա չափւում է ժամերով, իսկ շաքարը քաշով։

Բանուորները փոխանակում են իրանց ունեցած ապրանքը—փողի հետ։ Եւ այդ փոխանակութիւնը կատարւում է որոշ յարաբերութեամբ։ Փողի որոշ քանակութիւնը վճարում է՝ բանուորական ոյժը որոշ ժամանակամիջոց գործադրելու համար, օր., 2 մարկը՝ կտաւագործի 12-ժամեայ աշխատանքի համար։ Իսկ այդ 2 մարկը միթէ չեն ներկայացնում իրանցով այն բոլոր ապրանքները, որ կարելի է գնել նրանց միջոցով։ Հետևապէս, ըստ էութեան, բանուորը փոխանակել է իր ապրանքը—բանուորական ոյժը—զանազան ապրանքների հետ և այն էլ՝ որոշ յարաբերութեամբ։ Երկու մարկ վճարելով նրան, կապիտալիստը, իբրև փոխանակութիւն նրա մի օրւայ աշխատանքի համար՝ տալիս է նրան այս ինչ քանակութեամբ միս, շոր, փայտ և այլն։ Ուրեմն, այդ 2 մարկը արտայայտում են այն յարաբերութիւնը, որով բանուորական ոյժը փոխանակւում է

միւս ապրանքների հետ, այսինքն նա արտայայտում է բանուորական ոյժի փոխանակական արժէքը։ Բայց մի որև է ապրանքի փոխանակական արժէքը՝ արտայայտուած փողով՝ կոչւում է նրա գինը։ Այդպիսով, աշխատավարձ կոչւում է առանձնապէս բանուորական ոյժի գինը, որը սովորաբար կոչւում է աշխատանքի գին։

Վերցրէք, ինչ բանուոր կամենում էք, օր. մի ոստայնանկ։ Կապիտալիստը տալիս է նրան գործիքը և մանուածքը։ Ոստայնանկը նստում է աշխատելու, և մանուածքը դառնում է կտաւ։ Կապիտալիստը վերցնում է կտաւը և ծախում է, ասենք, 20 մարկով։ Ներկայանում է ճրդեօք կտաւագործի վաստակը, իբրև այդ կտաւի մի մաս, իբրև 20 մարկի, նրա աշխատանքի արդիւնքի մի մաս։ Երբէք։ Կտաւը դեռ չծախած կամ նոյն իսկ, գուցէ դեռ չվերջացրած՝ ոստայնանկը արդէն ստանում է իր վարձը։ Հետևապէս, կապիտալիստը վճարում է աշխատավարձը ոչ թէ այն փողերից, որ նա ստանում է կտաւի համար, այլ ուրիշ, պահւած փողերից։ Այն ապրանքները, որ կտաւագործը ստանում է իր ապրանքի՝ բանուորական ոյժի փոխարէն, նոյնքան քիչ կարելի է համարել նրա աշխատանքի արդիւնք, որքան և այն գործիքն ու մանուածքը, որ նա ստանում է բուրժուայից։ Կարող է պատահել, որ բուրժուայի կտաւը մնայ բոլորովին առանց ծախելու։ Կարող է պատահել նոյնպէս, որ, կտաւը ծախելով, նա չի ստանայ նոյն իսկ այն գումանը, որ ինքը վճարել է իբրև աշխատավարձ, կամ, ընդհակառակը, նա կծախի կտաւը շատ մեծ օգուտով։ Այդ բոլորի հետ գործ չունի ոստայնանկը։ Իր ունեցած կարողութեան, իր կապիտալի մի մասով կապիտալիստը գնում է ոստայնանկի բանուորական ոյժը—ճիշտ նոյնպէս, ինչպէս քիչ

առաջ, կապիտալի մի ուրիշ մասով նա գնել է հում նիւթը—մանուածքը և աշխատանքի գործիքը—մեքենան։ Այդ բոլոր գնելիքները վերջացնելուց յետոյ, որոնց թւում գտնւում է բանւորական ոյժը, կապիտալիստը իրան պատկանող նոում նիւթի եւ աշխատանքի գործիքների օգնութեամբ արտադրում է ապրանքներ։ Աշխատանքի գործիքների թւին պատկանում է նաև մեր ոստայնանկը, որը նոյնպէս ոչինչ չի ստանում իր աշխատանքի արդիւնքից կամ նրա գնից, ինչպէս ոչինչ չի ստանում գործող մեքենան։

Ուրեմն, աշխատավարձը չի կազմում բանւորի ունեցած բաժինը՝ նրա արտադրած ապրանքի մէջ։ Աշխատավարձը մի մասն է արդէն գոյութիւն ունեցող այն ապրանքի, որի միջոցով կապիտալիստը գնում է որոշ քանակութեամբ արդիւնագործող բանւորական ոյժ։

Այդպիսով, բանւորական ոյժը—դա մի ապրանք է, որը նրա սեփականատէրը, վարձու բանւորը, ծախում է կապիտալին։ Բայց ինչո՞ւ է ծախում նա այդ ապրանքը։—Որպէսզի կարողանայ ապրել։

Բայց բանւորական ոյժի արտայայտութիւնը—աշխատանքը միաժամանակ բանւորի կենսագործունէութիւնն է։ Եւ հէնց այդ կենսագործունեութիւնն է, որ նա ծախում է մի երրորդ անձնաւորութեան, որպէսզի գոյութեան միջոցներ ստեղծէ իր համար։ Ուրեմն, նրա կենսագործունէութիւնը ծառայում է նրան իբրև մի միջոց, որ հնարաւորութիւն է տալիս նրան ապրելու։ Նա աշխատում է, որպէսզի ապրէ. նա մինչև անգամ չի նայում աշխատանքի վրա, իբրև իր կեանքի մի մասի վրա։ Դա աւելի մի զոհաբերութիւն է, որ նա անում է կեանքին, մի ապրանք է, որ նա վիջում է երրորդ անձնաւորութեան։ Այդ պատճառով նրա գոր-

ծունէութեան արդիւնքը չի կազմում նրա գործունէութեան նպատակը։ Նա իր համար չէ, որ արտադրում է այն մետաքսը, որ ինքը գործում է, այն ոսկին, որ ինքը գտնում է, և այն պալատը, որ ինքը կառուցանում է իր աշխատանքով։ Իր համար նա արտադրում է աշխատավարձ, իսկ մետաքսը, ոսկին ու պալատը դառնում են նրա համար գոյութեան միջոցների մի որոշ քանակութիւն, թերևս մի բրդէ բաճկոն, մի քիչ սև փող և մի փոքրիկ բնակարան գետնայարկում։ Եւ բանւորի համար, որը 12 ժամւայ ընթացքում գործում է, մանում, քանդում, բեռներ կրում և այլն, նրա այդ 12-ժամեայ գործունէութիւնը բոլորովին կեանք չէ նշանակում։ Ընդհակառակը՝ նրա կեանքը սկսւում է միայն այն ժամանակ, երբ վերջանում է այդ գործունէութիւնը, այն ժամանակ, երբ նա նստում է ճաշելու, գնում է գինետուն կամ պառկում է քնելու։ Իսկ նրա 12-ժամեայ աշխատանքը նշանակութիւն ունի նրա համար, որպէս փող վաստակելու միջոց, որ հնարաւորութիւն է տալիս նրան՝ ճաշելու, գինետուն գնալու կամ անկողնում քնելու։ Եթէ մետաքսի որթը սկսէր մետաքս գործել միայն նրա համար, որ իր ամրողջ կեանքում ապրէր, իբրև թրթուր, նա միանգամայն կընմանուէր վարձու բանւորին։

Բանւորական ոյժը միշտ այդպէս ապրանք չի եղել, և աշխատանքը միշտ չէ այդպէս վարձու աշխատանք եղել, այսինքն ազատ աշխատանք։ Ստրուկը չէր ծախում իր բանւորական ոյժը ստրկատիրոջ, ինչպէս եզը չի ծախում իր ոյժը գիւղացուն։ Ստրկին ծախում էին միանգամայն ընդմիշտ ստրկատիրոջ—իր բանւորական ոյժի հետ միասին։ Նա մի ապրանք էր, որ կարող էր անցնել ձեռքից ձեռք։ Նա ինքը ապրանք էր,

բայց նրա բանուորական ոյժը ապրանք չէր նրա համար։ Ճորտը ծախում է իր բանուորական ոյժի միայն մի մասը։ Եւ նա վարձ չէր ստանում հողատիրոջից, այլ, ընդհակառակը, հողատէրը տուրք է ստանում նրանից։

Ճորտը պատկանում է հողին, և այդ հողի բերքը նա տալիս է հողատիրոջ։ Իսկ ազատ բանուորը, ընդհակառակը, ծախում է ինքը իրան և ծախում է մաս-մաս։ Օրն օրի ետևից նա ծախում է իր կեանքից 8, 10, 12, 15 ժամեր,—նրանց, ով աւելի կվճարի, ծախում է՝ հում նաւթ, աշխատանքի գործիքներ և գոյութեան միջոցներ ունեցողներին, այսինքն՝ կապիտալիստներին։ Բանուորը չի պատկանում ոչ մի որև է սեփականատիրոջ և ոչ հողին, բայց նրա կեանքի 8, 10, 12, 14 ժամը պատկանում են նրան, ով որ գնել է։ Բանուորը կարող է թողնել կապիտալիստին, որի մօտ նա վարձել է, երբ որ ինքը կըկամենայ, և կապիտալիստն էլ, իր կողմից, կարող է արձակել նրան, երբ ուզենայ,—երբ նա չի կարողանում այլևս օգուտ քաղել նրանից, կամ չի կարողանում այնքան օգուտ քաղել, որքան ինքը յոյս է ունեցել։ Բայց բանուորը, որի համար իր բանուորական ոյժի վաճառումը, նրա գոյութեան միակ աղբիւրն է, չի կարող, առանց հրաժարուելու իր կեանքից, չի կարող երես դարձնել այդ ոյժը գնողների, այսինքն՝ կապիտալիստների ամբողջ դասակարգից։ Նա պատկանում է ոչ թէ այս կամ այն կապիտալիստին, այլ ամբողջ կապիտալիստական դասակարգին, իսկ գտնել այդ դասակարգի մէջ գնողներ իր համար—դա արդէն իր գործն է։

Նախ քան քննելը աւելի մանրամասն կապիտալի և վարձու աշխատանքի փոխադարձ յարաբերութիւնը, մենք համառօտ կերպով կը շօշափենք այն ընդհանուր պայ-

մանները, որոնք դեր են կատարում աշխատավարձը որոշելու խնդրում։

Աշխատավարձը, ինչպէս տեսանք արդէն, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի որոշ ապրանքի՝ բանուորականի ոյժի գինը։ Աշխատավարձը այդ պատճառով ենթարկւում է նոյն օրէնքներին, որոնց ենթակայ են բոլոր այլ ապրանքների գները։ Հարց տանք ուրեմն, ինչո՞վ է որոշւում ապրանքի գինը։

II.

ԻՆՉՈ՞Վ Է ՈՐՈՇԻՈՒՄ ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ

Նա որոշւում է գնողների ու վաճառողների մրցումով, պահանջի և առաջարկի յարաբերութեամբ։ Ապրանքի գինը որոշող մրցումը բաժանւում է երեք տեսակի։

Միևնոյն ապրանքը առաջարկում են մի քանի վաճառողներ։ Այն վաճառողը, որ միևնոյն որակի ապրանքը ծախում է աւելի արժան, քան միւսները, աւելի շանս ունի դուրս մղելու շուկայից միւս վաճառողներին և ամենից շատ ապրանքներ վաճառելու։ Այդպիսով վաճառողները մրցում են միմեանց հետ շուկայի համար։ Ամեն մէկը նրանցից աշխատում է ծախել, որքան կարելի է շատ և որքան հնարաւոր է առանց մրցակիցների։ Այդ պատճառով մէկը ծախում է միւսից արժան։ Սկսւում է՝ մրցումն վաճառողների միջև, որի շնորհիւ առաջարկած ապրանքների գները ընկնում են։

Բայց մրցումը տեղի է ունենում և գնողների միջև. և այդ, իր կողմից, բարձրացնում է ապրանքների գները։

Վերջապէս, մրցումը տեղի է ունենում, մի կողմից, վաճառողների և, միւս կողմից, գնողների միջև։ Վաճառողները աշխատում են վաճառել, որքան կարելի է արժան։ Այդ մրցման հետևանքը կախված է առաջին երկու կարգի մրցումների յարաբերութիւնից, այսինքն՝ նրանից, թէ որտեղ է մրցումը աւելի ուժեղ—վաճառողների թէ գնողների բանակում։ Արդիւնաբերութիւնը կանգնեցրել է միմեանց դէմ երկու զօրք, և նրանց ամեն մէկի շարքերում, իր կարգին, անընդհատ կռիւ է մղւում։ Պարզ է, որ կյաղթի այն զօրքը, որի մէջ ներքին կռիւը, ներքին երկպառակութիւնները աւելի թոյլ են։

Ենթադրենք, շուկայում կայ 100 հակ բամբակ, իսկ գնողներին հարկաւոր է 1000 հակ։ Այդ դէպքում պահանջը 10 անգամ աւելի շատ կլինի առաջարկից։ Այդ պատճառով, գնողների մէջ պէտք է ուժեղ մրցում առաջանայ։ Նրանցից ամեն մէկը կաշխատի ձեռք բերել կարելւոյն չափ շատ հակեր, եթէ հնար լինի նոյն իսկ բոլոր 100 հակը։ Այդ ենթադրութիւնը այնքան էլ կամայական չի լինի։ Առևտրի պատմութեան մէջ կարելի է գտնել բամբակի անբերրիութեան շրջաններ, որոնց ժամանակ մի քանի՝ իրար հետ համաձայնութիւն կայացրած կապիտալիստներ աշխատում են տիրանալ ոչ թէ մի 100 հակի միայն, այլ բամբակի ամբողջ պաշարին։ Այդպիսով, ներկայ դէպքում, ամեն մի գնող, որպէսզի ետ մղէ միւսներին, կառաջարկի աւելի բարձը գին։ Տեսնելով այդ կռիւը գնողների բանակում և հաւատացած լինելով, որ բոլոր 100 հակի ծախելը միանգամայն ապահովւած է, բամբակ ծախողները չեն սկսի մրցել միմեանց հետ և իջեցնել գինը այն ժամանակ, երբ հակառակ կողմը, ընդհակառակը, անընդհատ

բարձրացնում է։ Նրանք կրկազմեն մի սերտ միութիւն, և նրանց պահանջները անչափ կլինէին, եթէ նրանց չբխանգարէր այն, որ նոյն իսկ ամենայամառ գնողները չեն կարող անցնել որոշ սահմանից։

Այդպիսով, եթէ առաջարկը քիչ է պահանջից, վաճառողների փոխադարձ մրցումը կամ շատ թոյլ է լինում, կամ բոլորովին չի լինում։ Որչափով թուլանում է վաճառողների մրցումը, նոյնչափով աճում, ուժեղանում է մրցումն գնողների միջև։ Դրա հետևանքը լինում է այն, որ ապրանքների գները քիչ թէ շատ բարձրանում են։

Յայտնի է, որ շատ աւելի յաճախ մենք գործ ենք ունենում հակառակ դէպքի և հակառակ հետևանքի հետ, այսինքն՝ շատ աւելի յաճախ առաջարկը աչքի ընկնող չափերով գերազանցում է պահանջից, տեղի է ունենում կատաղի մրցումն վաճառողների միջև, չեն գտնւում գնողներ և ապրանքները ծախւում են շատ արժան գներով։

Բայց ի՞նչ պէտք է հասկանալ գների բարձրանալ և ընկնել ասելով։ Ի՞նչ է նշանակում բարձր կամ ցածը գին։ Չէ՞ որ աւազի մի հատիկը՝ խոշորացոյցի տակ՝ ահագին մեծութիւն է, իսկ ամենամեծ աշտարակը՝ սարի հետ համեմատած՝ մի փոքր բան է։ Եթէ գինը որոշւում է պահանջի և առաջարկի յարաբերութեամբ, ինչո՞վ է պայմանաւորւում ինքը այդ յարաբերութիւնը։

Դիմենք առաջին պատահող առևտրականին։ Նա իսկոյն, առանց մի րոպէ վարանելու, կըպատասխանէ ձեր դրած հարցին և, ինչպէս մի ժամանակ Աղէքսանդրը Մակեդոնացին, մի հարւածով կըկտրէ ձեր մետաֆիզիքական Գորգեան հանգոյցը։ «Եթէ ապրանքի արժէքը

տադրութիւնը, որը ես ուզում եմ ծախել,—ինձ նստել է 100 մարկ և ես ստանում եմ նրա համար 110 մ., դա կըլինի մի սովորական ու՞ազնիւ առևտրական վաստակ։ Իսկ եթէ ես ստանում եմ 120 կամ 130 մ., դա կըլինի մեծ վաստակ, բայց եթէ ես ստանայի 200 մ., դա արդէն կլինէր մի անտաւոր և ուղղակի հսկայական վաստակ։» Ի՞նչն է ուրեմն այդ առևտրականի համար վաստակի չափ։—Ապրանքի արտադրութեան համար արած ծախքերը։ Եթէ նա իր ապրանքի փոխարէն ստանում է մի ուրիշ ապրանք, որի արտադրութեան վրա աւելի քիչ ծախսեր են արուած, ուրիշ խօսքով՝ որի արտադրութիւնը աւելի արժան է նստել, այդ դէպքում նա վնասւում է։ Իսկ եթէ նա ստանում է այն տեսակ ապրանք, որը աւելի թանկ է նստել, այդ դէպքում նա օգտւում է։ Եւ իր վաստակի բարձրանալը կամ ընկնելը նա հաշւում է, հիմնւելով այն բանի վրա, թէ ապրանքի փոխանակական արժէքը որչափով բարձր կամ ցածր է արտադրութեան ծախքերից։

Մենք տեսանք, որ պահանջի ու առաջարկի յարաբերութեան փոխւելը փոփոխութիւն է առաջացնում և ապրանքային գների մէջ—այդ գները երբեմն բարձրանում են, երբեմն իջնում։ Եթէ շնորհիւ առաջարկի պակասութեան կամ չափազանց աճած պահանջի մի որև է ապրանքի գինը սաստիկ բարձրանում է, միաժամանակ համապատասխան չափով մի ուրիշ ապրանքի գինը պէտք է ընկնէ, որովհետև ապրանքի գինը ծառայում է միայն իրրև փողային արտայայտութիւն այն յարաբերութեան, որով մի ապրանք փոխանակւում է մի որև է ուրիշ ապրանքի հետ։ Եթէ, օրինակ, մի արշին մետաքսի գինը 5 մարկից բարձրացաւ մինչև 6 մարկ, դա նշանակում է, որ արծաթի և միւս բոլոր ապրանքների գները ինքնըստինքեան թէև չեն փոխւել, բայց մետաքսի դէմ այնուամենայնիւ իջել են։ Նոյն քանակութեամբ մետաքս ստանալու համար, պէտք է տալ այժմ փոխարէնը ուրիշ ապրանքներից աւելի մեծ քանակութիւն, քան առաջ։ Ի՞նչ է լինում հետեւանքը, երբ մի ապրանքի գինը բարձրանում է։ Այն, որ կապիտալները հոսում են դէպի արդիւնաբերութեան ծաղկող ճիւղը, այն ճիւղը, որի ապրանքների գինը բարձրանում է,—և կապիտալների այդ իմմիգրացիան շարունակւում է մինչև այն րոպէն, երբ այդ ճիւղում կապիտալի տուած շահը կիջնի մինչև սովորական մակերևոյթը. աւելի ճիշտ, մինչև որ՝ գերարտադրութեան շնորհիւ՝ նրա տուած արդիւնքների գինը կիջնի մինչև արտադրութեան ծախքերի աստիճանը։

Եթէ, ընդհակառակը, ապրանքի գինը՝ ընկնում է արտադրութեան ծախքերից ցածր, կապիտալները ետ են մղւում այդ ապրանքի արդիւնաբերութիւնից։ Բացի այն դէպքից, երբ արդիւնաբերական մի որ և է ճիւղ, ժամանակի պահանջներին չհամապատասխանող, դատապարտուած է մահւան, կապիտալների փախուստի հետևանքը լինում է այն, որ այդ ապրանքը արտադրւում է աւելի քիչ չափերով և որ, հետևապէս, նրա առաջարկը նւազում է։ Շարժումը կդադարէ այն ժամանակ, երբ առաջարկը նորից կսկսի համապատասխանել պահանջին և ապրանքի գինը նորից կբարձրանայ մինչև արտադրութեան ծախքերի մակերևոյթը, կամ, աւելի ճիշտ, երբ պահանջը կգերազանցի առաջարկից և ապրանքի գինը կբարձրանայ արտադրութեան ծախքերից, որովհետև ապրանքի սովորական գինը միշտ կամ բարձր է կամ ցածր արտադրութեան ծախքերից։

Այդ բոլորից երևում է, որ կապիտալներ անընդ-

հատ տեղափոխուում են արդիւնաբերութեան մի ճիւղից դէպի միւսը։ Բարձր գները ուժեղ կերպով քաշում են դէպի իրանց կապիտալները, իսկ ցածր գները —ետ են մղում։

Մենք կարող կլինէինք, ուրիշ տեսակէտ ընդունելով, ցոյց տալ, որ ոչ միայն առաջարկն է որոշում արտադրութեան ծախքերով, այլ և պահանջը։ Բայց այդ մեզ շատ հեռու կըտանէր։

Մենք տեսանք քիչ վերև, որ պահանջի ու առաջարկի տատանումները միշտ մղում են ապրանքի գինը դէպի արտադրութեան ծախքերը։ Ճիշտ է, ապրանքի իսկական գինը միշտ կամ բարձր է կամ ցածր արտադրութեան ծախքերից, բայց վերջ ի վերջոյ այդ բարձրանալը եւ ընկնելը հաւասարակշռում են միմեանց, այնպէս որ մի որոշ ժամանակաշրջանում, որի միջոցին կատարւում է արդիւնաբերական մակընթացութիւն ու տեղատուութիւն, ապրանքները փոխանակւում են արտադրութեան ծախքերի համեմատ, և, հետևապէս, արտադրութեան ծախքերն են, որ որոշում են ապրանքների գինը։

Գների որոշումը արտադրութեան ծախքերով չըպէտք է այնպէս հասկանալ, ինչպէս այդ հասկանում են էկոնոմիստները։ Նրանք ասում են, որ ապրանքի միջին գինն հաւասար է արտադրութեան ծախքերին, որ այդպէս է օրէնքը։ Գների անկանոն երերումները, որտեղ բարձրանալուն հետևում է անկումը և անկմանը՝ բարձրանալը, նրանք պատահականութիւն են համարում։ Նոյնպիսի իրաւունքով կարելի էր—ինչպէս այդ հէնց արել են ուրիշ էկոնոմիստներ—գների տատանումը համարել օրէնք, իսկ նրանց որոշումը արտադրութեան ծախքերով—պատահականութիւն։ Բայց միայն

այդ տատանումներն են, սարսափելի աւերումներ առաջացնող և երկրաշարժի նման ամբողջ բուրժուական հասարակութիւնը ցնցող այդ տատանումները, որ հնարաւորութիւն են տալիս որոշել գինը արտադրութեան ծախքերով։ Այդ անկանոն շարժման, երերումների ընդհանուր ընթացքը ներկայացնում է արդիւնաբերական այդ անկանոնութեան սովորական կանոնը և շրջանառութեան մէջ մրցումը հաւասարակշռում է մի անկանոնութիւնը միւսով։

Այսպէս, ուրեմն, ապրանքի գինը որոշւում է արտադրութեան ծախքերով—այնպէս, որ այն ժամանակամիջոցը, երբ ապրանքի գինը բարձր է արտադրութեան ծախքերից, հաւասարակշռւում է այն ժամանակամիջոցով, երբ նա ցածր է, և այլն։ Այդ դրութիւնը այժ ունի, ի հարկ է, ոչ թէ այն դէպքում, երբ դա վերաբերում է արդիւնաբերութեան որևէ մի արդիւնքի, այլ արդիւնաբերական մի ամբողջ ճիւղի։ Նա նշանակութիւն ունի ոչ թէ մի արդիւնաբերողի, այլ արդիւնաբերողների ամբողջ դասակարգի համար։

Որոշել գինը արտադրութեան ծախքերով—դա նշանակում է որոշել նրան բանուորական ժամերով, որ անհրաժեշտ են ապրանքի արտադրութեան համար, որովհետև արտադրութեան ծախքերը կազմում են նախ՝ հում նիւթերը և գործիքների մաշւածքը, այսինքն՝ որոշ արդիւնքներ, որոնց արտադրութեան վրա ծախսւել է մի քանի բանուորական օր և որոնք այդ պատճառով ներկայացնում են բանուորական ժամերի մի որոշ քանակութիւն։ Երկրորդ՝ արդիւնքի վրայ անմիջապէս գործ դրած աշխատանքը, որը ինքը չափւում է ժամանակով։

Նոյն ընդհանուր օրէնքները, որոնցից կախւած

է ապրանքների գինը, որոշում են և աշխատանքի գինը, աշխատավարձը։

Աշխատանքի գինը երբեմն բարձրանում, երբեմն իջնում է, նայած պահանջի ու առաջարկի յարաբերութեանը և նայած նրան, թէ ինչպէս է դասաւորւում մրցումը բանւորական ոյժի գնողների—կապիտալիստների և ծախողների—բանւորների միջև։ Բանւորական վարձի տարուբերումները համապատասխանում են ընդհանուր առմամբ ապրանքային գների տարուբերումներին։ Իսկ այդ սահմանների շրջանում աշխատանքի գինը որոշւում է այն արտադրութեան ծախսերով, այն բանւորական ժամանակով, որ անհրաժեշտ է այդ ապրանքը, այսինքն բանւորական ոյժը, պատրաստելու համար։

Բայց այդ ինչ արտադրութեան ծախսեր են, որ գործադրւում են բանւորական ոյժի վրա։

Այդ այն ծախսերն են, որ անհրաժեշտ են, որպէսզի կարելի լինի պահպանել բանւորի գոյութիւնը եւ կրթել նրան, որպէս բանւորի.

Այդ պատճառով, որքան քիչ ժամանակ է պահանջւում աշխատանքի մի որև է տեսակը սովորելու, այնքան քիչ են բանւորի արտադրութեան ծախքերը, այնքան ցածր է նրա աշխատանքի գինը, նրա աշխատավարձը։

Արդիւնաբերութեան այն ճիւղերում, որտեղ բոլորովին չի պահանջւում, որ բանւորը սովորած լինի և որտեղ հարկաւոր է միայն բանւորի ֆիզիքական ոյժը, բանւորի արտադրութեան ծախքերը սահմանափակւում են այն ապրանքներով, որոնք անհրաժեշտ են նրա գոյութիւնը պահպանելու—այնքան, որ նա ընդունակ լինի աշխատելու։ Նրա աշխատանքի գինը որոշւում է այդ պատճառով նրան անհրաժեշտ գոյութեան միջոցներով։

Բայց անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ մի հանգամանք ևս։ Գործարանատէրը, որ հաշւում է արտադրութեան ծախքերը և նրանցով որոշում է արդիւնքների գինը, ի նկատի է առնում և գործիքների մաշւելը։ Եթէ, օր., մեքենան, որի համար նա վճարել է 1000 մարկ, մաշւում է 10 տարւայ ընթացքում, գործարանատէրը ամեն տարի ապրանքի գնին աւելացնում է 100 մարկ, որպէսզի 10 տարուց յետոյ նա հընարաւորութիւն ունենայ հնի տեղ նորը գնել։ Ճիշտ նոյնպէս հասարակ բանւորական ոյժի արտադրութեան ծախքերին պէտք է աւելացնել և այն ծախքերը, որ անհրաժեշտ են բանւորի ցեղի շարունակութեան համար, որպէսզի բանւոր դասակարգը հնարաւորութիւն ունենայ բազմանալու և նոր բանւորներ մատակարարելու կապիտալիստներին։ Հետևապէս բանւորի մաշւելը նոյնպէս հաշւի է առնւում, ինչպէս և մեքենայի մաշւելը։

Այդպիսով՝ հասարակ բանւորական ոյժի արտադրութեան ծախքերը—այդ այն ծախսերն են, որ անհրաժեշտ են բանւորի գոյութիւնը պահպանելու եւ ցեղը շարունակելու համար։ Այդ ծախքերի գինն է հէնց, որ կազմում է աշխատավարձը։ Այդ կերպ որոշած աշխատավարձը կոչւում է աշխատավարձի մինիմում։ Այդ մինիմումը, ինչպէս և առհասարակ գները, որ որոշում են արտադրութեան ծախքերով, նշանակութիւն ունի ոչ թէ առանձին անհատների, այլ ամբողջ ցեղի վերաբերմամբ։ Առանձին բանւորները, միլլիոնաւոր բանւորներ չափազանց քիչ են ստանում, որպէսզի հնարաւորութիւն ունենան ապրելու և բազմանալու, բայց ամբողջ բանւոր դասակարգի աշխատավարձը ներքուստների սահմաններում՝ յանգում է այդ մինիմումին։

100 / 3188

Այժմ, երբ մենք պարզեցինք աշխատավարձը և առհասարակ ապրանքների գները որոշող ընդհանուր օրէնքները, մենք կարող ենք աւելի մանրամասն քննել մեզ զբաղեցնող հարցը։

Կապիտալը բաղկացած է հում նիւթից, գործիքներից և ամեն տեսակ գոյութեան միջոցներից, որ գործադրւում են՝ նոր հում նիւթ, նոր գործիքներ և գոյութեան միջոցներ արտադրելու նպատակով։ Կապիտալի այդ բոլոր բաղկացուցիչ մասերը աշխատանքի ծնունդներ են, աշխատանքի արդիւնքներ, կուտակւած աշխատանք։ Հէնց այդ կուտակւած աշխատանքն է, նոր արտադրութեան համար իբրև միջոց ծառայող կուտակւած աշխատանքն է, որ կոչւում է կապիտալ։

Այսպէս են ասում էկոնոմիստները։

Ի՞նչ բան է սարուկը։ Սարուկ կոչւում են նեգրները, կամ սեամորթ մարդիկ։ Մի բացատրութիւնը արժէ միւսին։

Նեգրը նեգր է։ Միայն որոշ պայմաններում նա դառնում է սարուկ։ Մանող մեքենան—մեքենայ է, որի վրա մանում են, բայց որոշ պայմաններում նա դառնում է կապիտալ։ Այդ պայմաններից դուրս նա նոյնքան քիչ կարող է լինել կապիտալ, որքան ոսկին, ինքնըստինքեան՝ փող, կամ շաքարը՝ շաքարի գին։

Արտադրութեան ժամանակ մարդիկ որոշ յարաբերութիւններ են ստեղծում ոչ միայն դէպի բնութիւնը, այլ և դէպի միմեանց։ Արտադրելու համար նրանք պէտք է գործեն միացած և որոշ փոխազդեցութեան մէջ պէտք է մտնեն միմեանց հետ։ Այդ պատճառով՝ արտադրութեան համար, նրանց մէջ առաջանում են որոշ յարաբերութիւններ և միայն այդ հասարակական յարաբերութիւնների սահմանում է, որ տեղի է ունե-

նում նրանց ազդեցութիւնը բնութեան վրայ—արտադրութիւնը։

Նայած արտադրութեան միջոցների բնաւորութեանը՝ արդիւնաբերողների այդ հասարակական յարաբերութիւնները և նրանց գործողութիւնների փոխանակութեան և արդիւնաբերութեան պրոցեսսում մասնակցելու պայմանները լինում են տարբեր։ Երբ տեղի ունեցաւ նոր պատերազմական գործիքի—հրաձիգ զէնքի—գիւտը, փոխւեց զօրքի ամբողջ ներքին կազմակերպութիւնը, փոխւեց նոյնպէս և առանձին զօրքերի փոխադարձ յարաբերութիւնը։

Հետևապէս, արդիւնագործութեան նիւթական միջոցների, արդիւնագործական ոյժերի փոխւելու, զարգացման հետ միաժամանակ փոխւում են եւ արդիւնագործութեան հասարակական յարաբերութիւնները։ Արդիւնագործական ոյժերի ամբողջութիւնը կազմում է այն, որ կոչւում է հասարակական յարաբերութիւններ, կամ հասարակութիւն, որ կանգնած է ամեն մի առանձին դեպքում պատմական զարգացման որոշ աստիճանի վրայ և ունի իր որոշ, իրան միայն յատուկ բնաւորութիւնը։ Անցիկ հասարակութիւնը, Ֆեոդալական հասարակութիւնը բուրժուական հասարակութիւնը—արդիւնագործական յարաբերութիւնների ամբողջութիւններ են, որոնցից իւրաքանչիւրը նշանակում է միևնոյն ժամանակ պատմական զարգացման մի որոշ աստիճան։ Կապիտալը նոյնպէս արդիւնագործութեան հասարակական յարաբերութիւն է։ Նա բուրժուական հասարակական յարաբերութիւն է, բուրժուական հասարակութեան արդիւնագործական յարաբերութիւն։ Մինչ գոյութեան միջոցները, գործիքները, հում նիւթը, որոնցից բաղկացած է կապիտալը, չեն ստեղծւել ու կիրառւել որոշ հասարակական

պայմաններում, որոշ հասարակական յարաբերութիւնների մէջ։ Մի՞թէ նրանք չեն գործադրւում յետագայ արդիւնագործութեան համար դարձեալ յայտնի հասարակական պայմաններում։ Եւ մի՞թէ այդ որոշ հասարակական պայմանները չեն, որ յետագայ արդիւնագործութեան համար ծառայող արդիւնքները դարձնում են կապիտալ։

Կապիտալը բաղկացած է ոչ միայն գոյութեան միջոցներից, գործիքներից ու հում նիւթից, ոչ միայն նիւթեղէն արդիւնքներից. նա բաղկացած է նոյնպէս և փոխանակական արժէքներից։

Կապիտալը հետևապէս բացի նիւթեղէն արդիւնքներից, պարունակում է իր մէջ և ապրանքներ, փոխանակական արժէքներ, մի խօսքով՝ հասարակական մեծութիւններ։ Կապիտալը մնում է նոյնը, ինչ որ նա կայ, անկախ նրանից թէ բաղկացած է բամբակից թէ բըրդից, ցորենից թէ բրնձից, երկաթուղիներից թէ նաւերից, եթէ միայն բամբակի, ցորենի ու երկաթուղիների գները հաւասար են բրդի, բրնձի ու նաւերի գներին։ Կապիտալի նիւթեղէն հիմքը կարող է փոխուել, բայց ինքը կապիտալը մնում է այդ միջոցին անփոփոխ։

Բայց եթէ ամեն մի կապիտալ ապրանքների, այսինքն՝ փոխանակական արժէքների մի որոշ քանակութիւն է,—ապրանքների, փոխանակական արժէքների ամեն մի քանակութիւն կապիտալ չէ։

Փոխանակական արժէքների ամեն մի քանակութիւն—ինքը փոխանակական արժէք է։ Ամեն մի փոխանակական արժէք կարելի է դիտել իբրև մի շարք փոխանակական արժէքներ։ Օր. 1000 մարկ արժեցող առունը 1000 մարկի փոխանակական արժէք է։ Մի

պֆեննիգ *) արժեցող թղթի կտորը կարելի է դիտել, որպէս 100 հատ $^1/_{100}$ պֆեննիգի փոխանակական արժէքներ։ Այն արդիւնքները, որոնք կարելի է փոխանակել ուրիշ արդիւնքների հետ,—ապրանքներ են։ Այն յարաբերութիւնը, որով կատարւում է նրանց փոխանակութիւնը կազմում է նրանց փոխանակական արժէքը, կամ, եթէ նա արտայայտւում է փողով,—նրանց գինը։ Այդ արդիւնքների չափը, քանակը ոչ մի կապ չունի այն բանի հետ, որ նրանք ապրանքներ են և, որպէս այդպիսիք, ունին փոխանակական արժէք կամ գին։ Ծառը, լինի նա մեծ թէ փոքր, ծառ է։ Ի՞նչ քանակութեամբ էլ որ մենք վերցնելու լինենք երկաթը—1 փութ թէ մի մսխալ—ուրիշ արդիւնքների հետ փոխանակելու համար, կարո՞ղ է այդ փոխել երկաթի ապրանքային բնաւորութիւնը, նրա՝ փոխանակական արժէք լինելը։ Արդիւնքների չափից, մեծութիւնից ու քանակութիւնից կախուած է միայն նրանց առաւել կամ պակաս արժողութիւնը, նրանց բարձր կամ ցածր գինը։

Ի՞նչպէս է, ուրեմն, որ ապրանքների, փոխանակական արժէքների մի որոշ քանակութիւն դառնում է կապիտալ։

Նա դառնում է կապիտալ, երբ նա, իբրև ինքնուրոյն հասարակական ոյժ, այսինքն մի ոյժ, որ գտնւում է հասարակութեան մի որոշ մասի ձեռքում, պահպանւում և աճեցւում է շնորհիւ այն բանի, որ նա փոխանակւում է կենդանի բանւորական ոյժի հետ։ Բացի իր աշխատելու ընդունակութիւնից ոչ մի բան չունեցող

---

*) 1 պֆեննիգը մարկի $^1/_{100}$ մասն է. հաւասար է մօտաւորապէս $^1/_2$ կոպէկի։

մի դասակարգի գոյութիւնը՝ կապիտալի գոյացման անհրաժեշտ նախադրութիւնն է։

Միայն շնորհիւ կուտակուած աշխատանքի, առաջուց գործադրուած և մարմնացած աշխատանքի գերիշխող տիրապետութեան կենդանի աշխատանքի վրա—կուտակուած աշխատանքը դառնում է կապիտալ։

Կապիտալի էութիւնը կայանում է ոչ թէ նրանում, որ կուտակուած աշխատանքը ծառայում է կենդանի աշխատանքի ձեռքին իբրև միջոց նոր արդիւնագործութեան համար, այլ նրանում, որ կենդանի աշխատանքը ծառայում է կուտակուած աշխատանքին իբրև միջոց՝ նրա փոխանակական արժէքը պահպանելու և աճեցնելու համար։

Ի՞նչ է կատարւում այն փոխանակութեան ժամանակ, որ տեղի է ունենում կապիտալիստի և վարձու բանուորի միջև։

Իր բանուորական ոյժի փոխարէն բանուորը ստանում է գոյութեան միջոցներ, իսկ կապիտալիստը, այդ միջոցների փոխարէն, որ նա տալիս է բանուորին, ստանում է բանուորի աշխատանքը, նրա արտադրողական գործունէութիւնը, այն ստեղծագործական ոյժը, որի միջոցով բանուորը ոչ միայն լրացնում է այն, ինչ որ ինքը սպառում է, այլ նաեւ աւելացնում է կուտակուած աշխատանքի վրա նոր արժէք։ Ի՞նչի համար են պէտք բանուորին այն գոյութեան միջոցները, որ նա ստանում է կապիտալիստից։ Անմիջական սպառման, գործադրութեան համար։ Բայց, երբ ես սպառում եմ գոյութեան միջոցները, նրանք անհետ կորչում են, եթէ ես այն ժամանակամիջոցում, երբ այդ միջոցները պահպանում են իմ գոյութիւնը, չեմ ստեղծում իմ աշխատանքով՝ անյայտացած միջոցների փոխարէն՝ նոր

արժէքներ։ Սակայն հէնց այդ նոր ստեղծագործող ոյժն է, որ բանուորը դնում է կապիտալիստի տրամադրութեան տակ՝ նրանից ստացած գոյութեան միջոցների փոխարէն և այդպիսով կորցնում է իր իրաւունքը՝ անձամբ օգտուելու այդ ոյժից։

Պարզենք այդ բանը օրինակով։ Գիւղատնտեսը վճարում է իր մօտ աշխատող մշակին օրական 50 պֆենինգ։ Այդ փողի համար մշակը այդ օրւայ ընթացքում մշակում է նրա հողը և օրական 1 մարկ եկամուտ է ստեղծում նրա համար։ Գիւղատնտեսը ոչ միայն ետ է ստանում այն, ինչ որ նա վճարել է մշակին, այլ և կրկնապատկում է իր փողը։ Նշանակում է, այդ 50 պֆեննիգը նա գործադրել է արդիւնաւէտ կերպով։ Նա գտել է այդ փողով մշակի բանուորական ոյժը, որը արտադրում է կրկնակի արժողութեան արդիւնքներ, և 50 պֆեննիգը դառնում է 1 մարկ։ Մշակը, ընդհակառակը, 50 պֆ. ստանալով իր բանուորական ոյժի համար, որ նա տալիս է կապիտալիստին, գնում է այդ փողով ապրուստի միջոցներ, որ և սպառում է ինքը որոշ ժամանակամիջոցում։ Այդպիսով, այդ 50 պֆ. երկու տեսակ են գործադրւել. արդիւնաւէտ եղանակով կապիտալիստի կողմից, որովհետև նա փոխանակւել է 1 մարկ արտադրող բանուորական ոյժի հետ, և ապարդիւն եղանակով—բանուորի կողմից, որովհետև այդ փողով նա գտել է ապրուստի միջոցներ, որոնք անհետ կորել են և որոնք նա կարող է նորոգել միայն նորից ծախսելով իր բանուորական ոյժը։ Կապիտալը, հետեւապէս, ենթադրում է վարձու աշխատանքի գոյութիւնը, վարձու աշխատանքը ենթադրում է կապիտալի գոյութիւնը։ Նրանք փոխադարձաբար պայմանաւորում են միմեանց և մեկը ծնունդ է տալիս միւսին։

Բամբակի գործարանում աշխատող բանուորը միթէ միայն բամբակ է արտադրում։ Ո՛չ, նա արտադրում է նաև կապիտալ։ Նա արտադրում է արժէքներ, որոնք հնարաւորութիւն են ստեղծում նորից օգտուելու նրա աշխատանքից և այդ աշխատանքով ստեղծելու նոր արժէքներ։

Կապիտալը կարող է աճել միայն այն ժամանակ, երբ նա փոխանակւում է բանուորական ոյժի հետ, միայն այն ժամանակ, երբ երևան է գալիս նրա շնորհիւ վարձու աշխատանքը։ Վարձու աշխատաւորի բանուորական ոյժը կարող է փոխանակւել կապիտալի հետ, երբ նա աճեցնում է կապիտալը և մեծացնում է այն ոյժը, որ ստրկացնում է իրան։ Կապիտալի աճումը նշանակում է այդ պատճառով պրոլետարիատի, այսինքն՝ բանուոր դասակարգի աճումը։

Ելնելով այդ մտքից, բուրժուազիան և նրա իդէոլոգները—էկոնոմիստները—պնդում են, որ կապիտալիստի և բանուորի շահերը նոյնանում են։ Իսկապէս բանուորը կորած է, եթէ կապիտալը գործ չտայ նրան։ Կապիտալն էլ կորած է, եթէ նա չօգտի բանուորական ոյժից, իսկ օգտուելու համար նա պէտք է գնէ այդ ոյժը։ Որքան աւելի արագ է աճում արտադրութեան համար նշանակած կապիտալը, որքան աւելի ծաղկում է արդիւնաբերութիւնը, որքան աւելի հարստանում է բուրժուազիան, այնքան աւելի բանուորներ են հարկաւոր կապիտալիստին և այնքան աւելի թանկ է ծախում իրան բանուորը։

Այդպիսով, որպէսզի բանուոր դասակարգի դրութիւնը տանելի լինի, անհրաժեշտ է, որ արդիւնագործական կապիտալը որքան կարելի է արագ աճի։

Բայց ինչ է նշանակում արդիւնագործական կապիտալի արագ աճումը։—Դա նշանակում է կուտակուած աշխատանքի տիրապետութեան աճումը կենդանի աշխատանքի վրա։ Վարձու աշխատանքը, արտադրելով իրան վրայ իշխող ուրիշի հարստութիւնը, իրան թշնամի ոյժը—կապիտալը, ապրուստի միջոցներ է ստանում այդ վերջինից այն պայմանով, որ նա նորից դառնում է կապիտալի մի մասը, նրա յետագայ աճման գործօնը։

Այն միտը, թէ կապիտալի եւ բանուորների շահերը նոյնանման են, ճիշտ է միայն այն չափով, որ չափով կապիտալը եւ վարձու աշխատանքը ներկայանում են որպէս փեւնոյն յարաբերութեան երկու կողմեր։ Մէկը պայմանաւորում է միւսով—ճիշտ այնպէս, ինչպէս վաշխառուն եւ շուայլ մարդը պայմանաւորում են միմեանց գոյութիւնը։

Մինչև որ վարձու բանուորը մնում է վարձու բանուոր, նրա վիճակը կախած է կապիտալից։ Ահա թէ ինչումն է կայանում բանուորի և կապիտալիստի շահերի հաչակաւոր նոյնութիւնը։

Կապիտալի աճման հետ աճում է վարձու աշխատանքի քանակը, աճում է և վարձու բանուորների թիւը, ուրիշ խօսքով՝ կապիտալի տիրապետութիւնը տարածւում է աւելի բազմաթիւ անձերի վրա։ Եթէ վերցնենք ամենանպաստաւոր դէպքը, արդիւնագործական կապիտալի աճման հետ աճում է և աշխատանքի պահանջը։ Այդ ժամանակ բարձրանում է և աշխատանքի գինը, բարձրանում է աշխատավարձը։

Տունը—լինի նա մեծ թէ փոքր—բաւարարութիւն է տալիս հասարակական պահանջներին բնակարանի վերաբերմամբ, մինչև որ շրջակայ տները նրա նման և նրա չափ են։ Բայց հէնց որ փոքրիկ տան կողքին բուսնում են պալատներ, նախկին տունը թւում է մի

խրճիթ։ Նա վկայում է, որ իր տերը չի կարող մեծ պահանջներ ունենալ, և, որքան էլ այդ տունը ժամանակի ընթացքում բարձրանայ, այնուամենայնիւ նրա բնակիչը միշտ պէտք է իրան դժգոհ ու ճնշուած զգայ, եթէ հարեւան պալատը նոյն չափով, կամ գուցէ նոյն իսկ աւելի մեծ չափով, նոյնպէս բարձրանում է։

Որպէսզի աշխատավարձը նկատելի չափերով բարձրանայ անհրաժեշտ է, որ արդիւնագործական կապիտալը արագ կերպով աճի։ Իսկ կապիտալի արագ աճումը առաջ է բերում նոյնչափ արագ աճումն հարստութեան, շքեղութեան, հասարակական կարիքների, պահանջների և կեանքի վայելքների։ Թէև բանուորի կենսական յարմարութիւնները աճել են, բայց այն բարարարութիւնը, որ նա ստանում է, ոչինչ են կապիտալիստի ապրուստի համեմատութեամբ, որը առհասարակ անմատչելի է բանուորի համար, և ամբողջ հասարակութեան կուլտուրական վիճակի համեմատութեամբ։ Կենսական յարմարութիւններին հասարակական բնաւորութիւնը տալիս է նրանց համեմատական նշանակութիւն։

Առհասարակ, աշխատավարձը չի կարելի որոշել ապրանքների այն քանակով, որ կարելի է ստանալ նրա փոխարէն։ Պէտք է ի նկատի առնել և ուրիշ հանգամանքներ։

Բանուորները ստանում են իրանց աշխատանքի համար ոչ թէ անմիջապէս ապրանքներ, այլ որոշ քանակութեամբ փող։ Որոշւում է արդեօք լիովին աշխատավարձը միայն այդ փողային գնով։

XVI դարում Եւրոպայում շրջանառութեան մէջ գտնւող ոսկու և արծաթի քանակութիւնը նշանաւոր չափով շատացաւ, չնորհիւ նոր գտած աւելի հարուստ

և աւելի մատչելի ամերիկեան հանքերի։ Այդ պատճառով ոսկու և արծաթի արժէքները ընկան մեացած ապրանքների արժէքների համեմատութեամբ։ Բանուորները շարունակում էին ստանալ իրանց բանուորական ոյժի համար նոյնքան արծաթէ դրամներ, որքան և առաջ։ Նրանց աշխատանքի փողային գինը չփոխուեց, սակայն նրանց աշխատավարձը ընկաւ, որովհետև արծաթի նոյն քանակութեան փոխարէն նրանք ստանում էին աւելի քիչ ապրանք։ Դա եղաւ այն հանգամանքներից մէկը, որոնք նպաստեցին XVIII դարում կապիտալի աճմանը և բուրժուազիայի հզօրութեան զարգացմանը։

Վերցնենք մի ուրիշ օրինակ։ 1847 թուականին, ձմեռը, կենսական ամենաանհրաժեշտ մթերքների — հացի, մսի, իւղի, պանրի և այլն — գները նշանաւոր չափով բարձրացան չնորհիւ երաշտի։ Ենթադրենք, թէ բանուորները շարունակում էին ստանալ իրանց բանուորական ոյժի համար նոյնքան փող, որքան նրանք ստանում էին. մի՞թէ այդ դէպքում նրանց աշխատավարձը չէր ընկել։ Ի հարկէ, ընկել էր։ Զէ՞ որ փողի նոյն քանակով նրանք ստանում էին աւելի քիչ հաց, միս և այլն։ Նրանց աշխատավարձը ընկաւ ոչ թէ այն պատճառով, որ արծաթի արժէքը ընկաւ, այլ որովհետև ապրուստի միջոցների արժէքը բարձրացաւ։

Ենթադրենք, վերջապէս, որ արդիւնաբերութեան ու հողագործութեան բոլոր արդիւնքները, նոր մեքենաների ներմուծութեան, բարեյաջող կլիմայական պայմանների և այլն չնորհիւ, ընկել են իրանց գներում, իսկ բանուորական ոյժի փողային գինը մնում է նոյնը։ Բանուորները հնարաւորութիւն ունեն այժմ գնելու նոյն փողով աւելի շատ ապրանքներ զանազան տեսակի։ Նրանց աշխատավարձը բարձրանում է հետևապէս հենց

այն պատճառով, որ նրանց փողային արժէքը մնում է անփոփոխ։

Նշանակում է, աշխատանքի փողային գինը, նոմինալ աշխատավարձը միևնոյնը չէ, ինչ որ ռէալ (իրական) աշխատավարձը, այսինքն ապրանքների այն քանակը, որ կարելի է իրապէս ստանալ աշխատավարձի փոխարէն։ Այդ պատճառով, երբ մենք խօսում ենք աշխատավարձի բարձրանալու կամ ընկնելու մասին, միայն աշխատանքի փողային գինը, կամ նոմինալ աշխատավարձը չէ, որ մենք պէտք է աչքի առաջ ունենանք։

Բայց ոչ նոմինալ աշխատավարձը, այսինքն փողի այն գումարը, որ ստանում է բանուորը կապիտալիստից, ոչ ռէալ աշխատավարձը, այսինքն ապրանքների այն քանակութիւնը, որ բանուորը ձեռք է բերում այդ փողով, չեն սպառում իրանցով այն պայմանները, որոնք որոշում են աշխատավարձը։

Ամենից առաջ կարևոր է աշխատավարձը չափել կապիտալիստի ստացած օգտի, շահի համեմատութեամբ, ուրիշ խօսքով—կարևոր է համեմատական աշխատավարձը։

Ռէալ աշխատավարձը արտայայտում է աշխատանքի գնի յարաբերութիւնը դէպի ուրիշ ապրանքների գները, իսկ համեմատականը, ընդհակառակը, արտայայտում է կենդանի աշխատանքի յարաբերութիւնը դէպի նրա նոր արտադրած արժէքը, այսինքն դէպի կապիտալը։

Մենք ասացինք վերև, որ «աշխատավարձը չի ներկայացնում իրանից բանուորի բաժինը նրա արտադրած ապրանքի մէջ։ Աշխատավարձը մի մասն է արդէն գոյութիւն ունեցող ապրանքի, որի միջոցով կապիտա-

լիստը գնում է որոշ քանակութեամբ արտադրող բանուորական ոյժ։» Բայց այդ աշխատավարձը կապիտալիստը պէտք է դուրս գայ այն գնից, որով նա ծախում է բանուորի արտադրած ապրանքը, և պէտք է դուրս գայ այնպէս, որ բացի այդ արտադրութեան ծախքերից ստանայ և մի աւելորդ բան—շահ։ Այն գինը, որով ծախւում է արտադրած ապրանքը, բաժանւում է երեք մասի. առաջինը ծածկում է հում նիւթի գինը և մեքենաների, ինստրումենտների և աշխատանքի այլ գործիքների մաշւածքը։ Երկրորդը—ծածկում է աշխատավարձը, և երրորդը—ծախսերից աւելացող մասը՝ կապիտալիստի շահը։ Մինչդեռ առաջին մասը ծածկում է այն արժէքները, որ արդեն առաջ էլ գոյութիւն են ունեցել, երկրորդ և երրորդ մասերը—աշխատավարձը և կապիտալիստի շահը, ընդհանուր առմամբ, արտադրւում է ի հաշիւ բանուորի աշխատանքով ստեղծած և արտադրութեան միջոցներին կցած՝ նոր արժէքի։ Այդ պատճառով մենք իրաւունք ունենք պահանջելու, որ հնարաւոր լինի համեմատել միմեանց հետ աշխատավարձը և շահը, որպէս բանուորի արտադրած արդիւնքի երկու մասեր։

Ռէալ աշխատավարձը կարող է մնալ նոյնը կամ նոյն իսկ կարող է բարձրանալ, բայց համեմատականը, այնուամենայնիւ, կարող է միևնոյն ժամանակ ընկնել։ Ենթադրենք, օրինակ, որ ապրուստի բոլոր միջոցները երկու երրորդականով ընկել են իրանց գներում, իսկ բանուորի օրավարձը ընդամենը մի երրորդականով, օրինակ. 3 մարկից իջել է մինչև 2 մարկ։ Թէև բանուորը այդ 2 մ-ով աւելի շատ ապրանք կարող է ձեռք բերել, քան առաջ 3-ով, բայց և այնպէս նրա աշխատավարձը՝ կապիտալիստի ստացած շահի հետ համեմատած՝

ընկնում է։ Կապիտալիստի (օր. գործարանատիրոջ) շահը աւելացաւ մի մարկով, այսինքն նա վճարում է բանւորին աւելի քիչ փոխանակական արժէքներ, իսկ բանւորը պէտք է արտադրէ աւելի շատ։ Կապիտալի բաժինը՝ աշխատանքի բաժնի համեմատութեամբ՝ աւելանում է։ Հասարակական հարստութեան բաշխումն կապիտալի և աշխատանքի միջև դառնում է աւելի անհաւասար։ Կապիտալիստը իր առաջւայ կապիտալով ունի իր տրամադրութեան տակ աւելի մեծ քանակութեամբ աշխատանք։ Կապիտալիստ դասակարգի ոյժը, իշխանութիւնը բանւոր դասակարգի վրա աճում է, բանւորների հասարակական դրութիւնը վատթարանում է, ընկնում է մի աստիճան էլ ցածր համեմատած կապիտալիստ դասակարգի դրութեան հետ։

Ո՞րն է ուրեմն ընդհանուր օրէնքը, որ ղեկավարում է աշխատավարձի և շահի ընկնելու և բարձրանալու փոխադարձ յարաբերութիւնը։

Աշխատավարձի և շահի փոխադարձ կախումը հակառակ-յարաբերական է (обратно-пропорціонально)։ Կապիտալի բաժինը շահը աճում է նոյն չափով, որչափով ընկնում է աշխատանքի բաժինը—աշխատավարձը, և ընդհակառակը շահը աւելանում է այն չափով, որ չափով պակասում է աշխատավարձը, և շահը պակասում է այն չափով, որ չափով աւելանում է աշխատավարձը։

Կարող են գուցէ հակաճառել, թէ կապիտալիստը կարող է շահ ունենալ շնորհիւ արդիւնքների յաջող փոխանակութեան, շնորհիւ պահանջի շատանալուն նրա ապրանքի վերաբերմամբ, շնորհիւ նոր շուկաներ գտնելու կամ հները լայնացնելու և այլն, և որ այդպիսով կապիտալիստի շահը կարող է աճել շնորհիւ այն բանի, որ միւս կապիտալիստները վնասւում են,

անկախ աշխատավարձի, բանւորական ոյժի փոխանակական արժէքի տարուբերումներից։ Կամ որ կապիտալիստի շահը կարող է աճել շնորհիւ գործիքների կատարելագործման, բնութեան նոր ոյժերի գործադրութեան և այլն։

Բայց այդ դէպքում էլ պէտք է ենթադրել, որ հետևանքը նոյնը կլինի, թէև նրան կհասնենք հակառակ ճանապարհով։ Ճիշտ է, շահը այն պատճառով չաւելացաւ, որ աշխատավարձն ընկաւ, այլ աշխատավարձն ընկաւ, որովհետև շահը աւելացաւ։ Կապիտալիստը ուրիշի աշխատանքի նոյն քանակութեամբ ձեռք բերեց փոխանակական արժէքների աւելի մեծ քանակութիւն առանց վճարելու սակայն աշխատանքին աւելի թանկ։ Հետևապէս աշխատանքի վարձատրութիւնը, համեմատած այն զուտ արդիւնքի հետ, որը նա տալիս է կապիտալիստին, նախկինից աւելի արժան դարձաւ։

Ցիշենք նոյնպէս, որ, չնայելով ապրանքի գների տատանումներին, ապրանքի միջին գինը, այն յարաբերութիւնը, որով նա փոխանակւում է միւս ապրանքների հետ, որոշւում է նրա արդիւնագործութեան վրա եղած ծախսերով։ Այս պատճառով մի շարք կապիտալիստների ստացած արդիւնքները ի հաշիւ ուրիշների ընդհանրապէս հաւասարակշիռ են դառնում։ Մեքենաների կատարելագործումը և բնութեան ոյժերի գործադրութեան նոր եղանակները հնարաւորութիւն են տալիս բանւորական նոյն ժամանակամիջոցում, աշխատանքի ու կապիտալի նոյն քանակութեամբ ստեղծել մթերքների աւելի մեծ քանակութիւն, բայց ոչ աւելի փոխանակական արժէքներ։ Եթէ ես ոստայնական մեքենայի օգնութեամբ սկսեմ պատրաստել մի ժաժում երկու անգամ աւելի շատ մանւածք, քան ձեռ-

քի աշխատանքով—ասենք 100 ֆունտ 50 ֆ. փոխարէն, —այն ժամանակ ես այդ 100 ֆ. մանուածքով երկու անգամ աւելի ապրանք չեմ ստանայ, որովհետև արդիւնագործութեան ծախքերը կիսով չափ պակասել են և ես նոյն այդ ծախքերով կարող եմ պատրաստել մթերքների կրկնակի քանակութիւն։

Վերջապէս արդիւնագործութեան զուտ արդիւնքը, ինչպէս էլ բաժանուելու լինի կապիտալիստների դասակարգի մէջ—մի երկրի բուրժուազիայի, թէ համաշխարհային շուկայի մէջ, այդ միևնոյն է—այդ արդիւնքի ընդհանուր գումարը կազմում է այն արժէքը, որ կենդանի աշխատանքը աւելացրել է նախկին կուտակուածին։ Այս ընդհանուր գումարը աւելանում է այն չափով, որ չափով աշխատանքը մեծացնում է կապիտալը, այսինքն որ չափով շահը աճում է ի հաշիւ աշխատավարձի։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ միևնոյն իսկ կապիտալի և վարձու աշխատանքի մէջ եղած յարաբերութիւնների շրջանում մեկի և միւսի շահերը ուղղակի հակառակ են։

Կապիտալի արագ աճումը համահաւասար է շահի արագ աճմանը։ Բայց շահը միայն այն ժամանակ արագ կաճի, երբ արագ կըպակասի աշխատանքի գինը, աշխատավարձի համեմատական չափը։

Այս վերջինը կարող է ընկնել նոյն իսկ այն դէպքում, երբ ինչպէս ռէալ, նոյնպէս և նօմինալ աշխատավարձը բարձրանում է, բայց միայն ոչ այն չափով, որ չափով շահը։ Եթէ օրինակ արդիւնաբերութեան ծաղկած ժամանակ աշխատավարձը աւելացել է 5%-ով, իսկ շահը 30%, ուրեմն կընշանակի աշ-

խատավարձը համեմատաբար ոչ թէ աւելացել, այլ պակասել է։

Եթէ ասում են, որ բանուորը շահագրգռուած է կապիտալի արագ աճումով, այդ նշանակում է, որ բանուորը որքան արագ կերպով աւելացնէ ուրիշի հարստութիւնը, այնքան աւելի մեծ փշրանքներ կստանայ այդ հարստութիւնից, այնքան աւելի շատ բանուորներ կհարկաւորուեն, աւելի կմեծանայ կապիտալի ստրուկների թիւը։

Ուրեմն կարող ենք հետևեալ եզրակացութիւններն անել.

Բանուորի դրութեան նոյնիսկ ամենաբարեյաջող պայմանները, կապիտալի ամենաարագ աճումը, որքան էլ նա բանուորի տնտեսական դրութիւնը բարելաւելու լինի, անկարող է ոչնչացնել նրա շահերի և բուրժուա-կապիտալիստի շահերի հակադրութիւնը։ Շահի ու աշխատավարձի միջև կըշարունակի գոյութիւն ունենալ հակադարձ յարաբերական կախումը։

Որքան էլ աւելանայ աշխատավարձը կապիտալի արագ աճման միջոցին, շահի աճումը անհամեմատ աւելի արագ կը կատարուի։ Բանուորի տնտեսական դրութեան բարելաւումը կատարուում է ի հաշիւ նրա հասարակական դրութեան, և լայնանում է նրան կապիտալիստից բաժանող վիհը։

Վերջապէս նոյնիսկ այն հանգամանքը, որ վարձու աշխատանքի համար աւելի բարեյաջող պայմանը արդիւնագործող կապիտալի արագ աճումն է, նշանակում է միայն հետևեալը. որքան եռանդով է աշխատում բանուոր դասակարգը իրան թշնամու ոյժը մեծացնելու, իրան վրա տիրապետող դասակարգի հա-

բրստութիւնը բազմապատկելու և աւելացնելու համար, նոյնքան աւելի բարեյաջող են դառնում այն պայմանները, որոնց մէջ նրան թոյլատրւում է աշխատել բուրժուայի հարստութիւնը նորից աւելացնելու՝ կապիտալի իշխանութիւնը աւելի ուժեղացնելու համար, այսինքն թոյլատրւում է նրան կռել այն ոսկէ շղթաները, որով շղթայում է նրան բուրժուազիան։

Բայց մի՞թէ արդիւնագործող կապիտալի անումը և աշխատավարձի աւելանալը իսկապէս անքակտելի կապով միացած են միմեանց հետ, որպէս պնդում են այդ էկոնոմիստները։ Մենք չենք կարող հաւատալ նրանց խօսքին. չենք կարող հաւատալ նոյնիսկ այն բանին, թէ որքան խոշոր է կապիտալը, այնքան աւելի խնամքով է կերակրում նա իր ստրուկներին։ Բուրժուազիան բաւականաչափ լուսաւորւած է և բաւականաչափ հաշուկեաց, որպէսզի ազատ լինի ֆէօդալների մնափառութիւնից, որոնք հպարտանում էին իրանց ծառաների շքեղութեամբ։

Այս պատճառով անհրաժեշտ է, որ ուշադրութեամբ քննենք արդիւնագործող կապիտալի ազդեցութիւնը աշխատավարձի վրա։

Բուրժուական հասարակութեան ամբողջ արդիւնագործող կապիտալի աճելով աշխատանքի կուտակումը շատ աւելի բազմակողմանի է դառնում։ Աւելանում է կապիտալիստների թիւն ու նրանց հարստութիւնը։ Իսկ կապիտալիստների աւելանալով ուժեղանում է կապիտալիստների մէջ եղած մրցումը։ Կապիտալների ծաւալի անումը հնարաւորութիւն է տալիս արդիւնաբերական պատերազմի դաշտը դուրս բերելու բանւորների աւելի բազմամարդ և լաւ զինւած բանակներ։

Կապիտալիստը իր մրցակցին ասպարէզից դուրս

քշելու և նրա կապիտալին տիրանալու համար պէտք է վաճառի իր ապրանքը աւելի արժան։ Որպէսզի կարողանայ առանց վնասւելու արժան վաճառել, նա պէտք է արդիւնագործութիւնը արժան ձևով կատարէ, այսինքն որքան կարելի է պէտք է մեծացնէ աշխատանքի բեղմնաւորութիւնը։ Իսկ աշխատանքի բեղմնաւորութիւնը բարձրացնելու համար նախ հարկաւոր է աշխատանքի աւելի մեծ բաժանում՝ համեմատած նախկինի հետ, և յետոյ՝ գործի մէջ պէտք է մտցնել նոր ու նոր մեքենաներ եւ անդադար կատարելագործել նրանց։ Որքան մեծ է բանւորների այդ բանակը, որքան մեծ չափերով է մտցւում գործի մէջ մեքենայի արդիւնագործութիւնը, այնքան աւելի են պակասում արդիւնագործութեան ծախքերը և այնքան բեղմնաւոր է դառնում աշխատանքը։ Այս պատճառով կապիտալիստները իրար հետ մրցում են աշխատանքի աւելի մեծ բաժանումով և մեքենաների գործադրութեամբ։

Բայց երբ կապիտալիստը շնորհիւ աշխատանքի աւելի մեծ բաժանման, շնորհիւ նոր մեքենաների գործադրութեան և նրանց կատարելագործման և վերջապէս շնորհիւ բնութեան ոյժերի աւելի օգտակար շահագործութեան հնարաւորութիւն է ստանում աշխատանքի միևնոյն չափով արտադրել ապրանքների աւելի մեծ քանակութիւն, քան նրա մրցակիցները—օրինակ, մէկ արշին կտաւ նոյն ժամանակամիջոցում, որում միւսները ստանում են կէս արշին—նա ինչպէս կըվարւի։

Նա կարող է շարունակել կէս արշին կտաւը վաճառել նոյն գնով, ինչ գին կայ շուկայում, բայց այդ կերպ նա չէ կարող իր հակառակորդներին դուրս քշել շուկայից և այդպիսով աւելացնել իր ապրանքների սպառումը։ Նրա արդիւնագործութեան լայնա-

ցումը սակայն պահանջում է, որ այդ լայնացման համապատասխան աւելանայ և սպառումը։ Արդիւնագործութեան աւելի ուժեղ և թանկ արժեցող միջոցները, որոնց նա առաջինը գործադրութեան մէջ մտցրեց, ճիշտ է, թոյլատրում են նրան ապրանքը արժան վաճառել, բայց միևնոյն ժամանակ ստիպում են նրան որքան կարելի է շատ ապրանք սպառել, այսինքն ձեռք բերել աւելի մեծ շուկաներ։ Այս պատճառով նա կէս արշին կտաւը աւելի արժան կը վաճառի, քան թէ ուրիշները։

Բայց չնայելով որ մէկ արշին կտաւի արդիւնագործութիւնը մեր կապիտալիստին աւելի թանկ չէ նստում քան ուրիշներին կէս արշինը, այնուամենայնիւ նա այդ մէկ արշինը նոյն գնով չի վաճառի, ինչ գնով ուրիշները վաճառում են իրենց կէս արշինը։ Այդ դէպքում նա ետ կստանար միայն արդիւնագործութեան ծախքերը, բայց աւելորդ օգուտ չէր ստանայ։ Նա մեծ, համեմատած ուրիշների հետ, օգուտ կը-ստանայ այն բանից, որ գործադրել է աւելի մեծ կապիտալ, և ոչ թէ նրանից, որ նրա կապիտալը ստեղծում է աւելի մեծ արժէքներ, քան ուրիշների կապիտալները։ Բացի դրանից, իր նպատակին հասնելու համար բաւական է, որ նա նշանակէ այնպիսի գներ, որոնք միայն մի քանի % %-ով աւելի պակաս լինեն նրա մրցակիցների գներից։ Դրանով նա կյաղթի նրանց և իր ձեռքը կը գցի նրանց շուկաների մի մասը հէնց նրանով, որ պակասեցնում է ապրանքների գները։ Յիշենք վերջապէս, որ միջին գինը միշտ բարձր կամ ցածր է արդիւնագործութեան ծախքերից, նայելով՝ բարեյաջող թէ անբարեյաջող պայմաններում է գտնւում արդիւնաբերութիւնը ներկայ մոմէնտում։ Նայելով նը-բան, թէ մէկ արշին կտաւի գինը բարձր է թէ ցածր

արդիւնագործութեան ծախքերից, դրա համեմատ էլ արդիւնագործութեան նոր և աւելի օգտակար միջոցներ ձեռք առնող կապիտալիստի շահի %-ը կը-տարուբերւի։

Սակայն մեր կապիտալիստը երկար չէ կարող ծգտուել այդ առաւելութիւններից, արտօնութիւններից։ Նրա մրցակից ձեռնարկողները նոյնպէս կսկսեն մտցնել նոյն մեքենաները և աշխատանքի նոյն բաժանումը—եթէ ոչ աւել, գոնէ նոյն չափով։ Բոլոր այս նորաձևութիւնները սովորական կդառնան և վերջ ի վերջոյ կը-տաւի գինը կպակասի ոչ միայն հին, այլ և նոր արդիւնագործութեան ծախսերից։

Այսպիսով կապիտալիստները կրկին ընկնում են այն դրութեան մէջ, ինչ էին մինչև արդիւնագործութեան նոր միջոցներ մտցնելը, և թէև նրանք նոր միջոցների օգնութեամբ կարող են նախկին գնով մատակարարել մթերքների կրկնակի քանակութիւն, բայց այժմ արդէն նրանք ստիպւած են մթերքների այդ կրկնակի քանակութիւնը աւելի արժան վաճառել քան առաջ։ Այժմ արդիւնագործութեան ծախսերի քանակի փոփոխութեան պատճառով ամեն ինչ նորից է սկսւում։ Սկսւում է աշխատանքի աւելի մեծ բաժանում, մտցը-ւում են աւելի շատ մեքենաներ, լայնանում են ձեռնարկութեան չափերը և սկսւում է աշխատանքի բաժանման ու մեքենաների աւելի արդիւնաւէտ շահագործութիւն։ Իսկ մրցումը նորից երևան է բերում իր հետևանքները։

Այսպէս ուրեմն մենք տեսնում ենք, որ արդիւնագործութեան եղանակի ու միջոցների մէջ անդադար տեղի են ունենում յեղաշրջումներ—տեսնում ենք, որ աշխատանքի բաժանումը անխուսափելի կերպով առաջ է բերում

աշխատանքի նոր ու աւելի մեծ բաժանում, մեքենաների գործադրութիւնը ստիպում է էլ աւելի մեծ չափերով օգտուել մեքենաներից եւ մեծ չափերով արդիւնագործութիւնը անընդհատ պահանջում է նրա չափերի անվերջ լայնացումն։

Այս օրէնքը բուրժուական արդիւնագործութիւնը շարունակ առաջ է մղում և կապիտալին ստիպում է լարել աշխատանքի ամբողջ արտադրողական ոյժը, որովհետեւ նա ինքն էլ մինչեւ վերջին ասեանն լարում է իր ոյժերը։ Այս օրէնքը արդիւնագործութեանը ոչ մի րոպէ հանգիստ չէ տալիս և անդադար շշնջում է նրա ականջին. առաջ, առաջ։

Այս նոյն օրէնքն է, որը արդիւնաբերութեան պարբերական տատանումների միջոցին ապրանքի գները հաւասարեցնում է արդիւնագործութեան ծախքերին։

Որքան էլ հսկայական լինեն արդիւնագործութեան այն միջոցները, որ կապիտալիստը մտցնում է գործի մէջ, մրցման շնորհիւ նրանք բոլորն էլ ստիպողական են դառնում բոլորի համար, և այդ րոպէից նրա կապիտալի մեծ արդիւնաբերութեան հետեւանքը այն է, որ նա միւնոյն գնով ստիպւած է լինում մատակարարել 10, 20, 100 անգամ աւելի մթերքներ, քան առաջ։

Բայց որովհետեւ վաճառող ապրանքների քանակութեան մեծանալով կապիտալիստը իրեն վարձատրելու համար ստիպւած է սպառումը լայնացնել գուցէ մի հազար անգամ, որովհետեւ լայն սպառումը անհրաժեշտ է նրան այժմ արդէն ոչ միայն օգուտ ըստանալու համար, այլ և արդիւնագործութեան ծախքերը ծածկելու համար,— չէ՞ որ մենք տեսանք, որ արդիւնագործութեան գործիքները աւելի թանկանում են,—և որովհետեւ նոյն դրութեան մէջ են և նրա մրցակիցները, այդ պատճառով ամեն անգամ կուիր նո-

ռոգւում է այնքան աւելի մեծ ոյժով, որքան աւելի ուժեղ են արդիւնագործութեան նոր միջոցները։ Հետեւապես աշխատանքի բաժանումը եւ մեքենաների գործադրութիւնը պետք է շարունակեն աճել։

Որքան էլ մեծ լինի արդիւնագործութեան նոր միջոցների ոյժը, մրցումը այնուամենայնիւ խանգարում է կապիտալին օգտուել նրանց պտուղներից, որովհետեւ ապրանքների գները իջնում հաւասարւում են արդիւնագործութեան ծախքերին, առաջ է գալիս արժան արդիւնագործութիւն և արժան վաճառում։ Այսպիսով կապիտալիստը չնայելով իր բոլոր ջանքերին ոչինչ չի ստանում բացի միւնոյն բանւորական ժամանակամիջոցում աւելի շատ մթերքներ արդիւնագործելու անհրաժեշտութիւնից, այսինքն բացի իր կապիտալի գործադրութեան համար աւելի ծանր պայմաններից։ Որովհետեւ մրցումը իր արդիւնագործութեան ծախքերի օրէնքով ամբողջ ժամանակ հետեւում է նրան և նրա դէմ է ուղղում այն զէնքը, որ նա պատրաստում է իր մրցակիցների համար, ուստի նա միշտ աշխատում է աւելի խորամանկ գտնել, մտցնելով նոր, աւելի թանկ, բայց և աւելի արդիւնաւէտ մեքենաներ և աշխատանքի նոր բաժանում,—առանց սպասելու, որ նախկին մեքենաները հնանան։

Մի րոպէ երևակայենք, որ այս տենդային կենդանութիւնը տիրում է ամբողջ համաշխարհային շուկայում, և մեզ հասկանալի կլինի, թէ ինչու կապիտալի աճումը, կուտակումն ու կենտրոնացումը բերում են իրանց հետ անընդհատ աշխատանքի հսկայական բաժանում և մեքենաների կատարելագործում։

Բայց ինչպէ՞ս են ազդում աշխատավարձի վրա

այս երեւոյթները, որ անխուսափելի կերպով կապված են արդիւնագործող կապիտալի անման հետ։

Աշխատանքի մեծ բաժանումը մի բանւորին հնարաւորութիւն է տալիս կատարելու 5, 10, 20 բանւորների գործ և այդ պատճառով բանւորների մէջ մրցումը աւելանում է 5, 10, 20 անգամ։

Մրցումը բանւորների մէջ կայանում է ոչ միայն նրա մէջ, որ մէկը իր ոյժը ծախում է աւելի արժան քան միւսը, այլ և նրա մէջ, որ մէկը կատարում է 5, 10, 20 մարդու աշխատանք։ Իսկ կապիտալը մտցնելով և լայնացնելով շարունակ աշխատանքի բաժանումը, բանւորներին ստիպում է հէնց այդ կերպ մրցել միմեանց հետ։

Յետոյ, աշխատանքի բաժանման ուժեղանալու համեմաs աւելի պարզ բնաւորութիւն է ստանում եւ ինքը աշխատանքը։ *Բանւորի առանձին անհատական ճարպիկութիւնը իր նշանակութիւնը կորցնում է այլևս։ Բանւորը դառնում է հասարակ, միօրինակ արտադրող ոյժ, որը առիթ չէ ունենում գործադրելու իր ոչ ֆիզիքական և ոչ էլ հոգեկան ընդունակութիւնները։ Նրա աշխատանքը կարող է կատարել ամեն ոք։ Այս պատճառով ամեն կողմից մրցողներ են առաջ գալիս։ Պէտք է աչքի առաջ ունենալ, որ որքան հեշտ է լինում աշխատանքը, որքան քիչ նախապատրաստութիւն է պահանջում նա, հետևաբար և աւելի պակաս արդիւնագործութեան ծախքեր, այնքան աւելի իջնում է աշխատավարձը, որը, ինչպէս և ամեն մի ուրիշ ապրանքի գին, որոշւում է արդիւնագործութեան ծախքերով։*

Հետեւաբար բանւորների մրցումը ուժեղանում է, իսկ աշխատավարձը ընկնում է նոյն չափով, որչափով աշխատանքը դառնում է աւելի միօրինակ եւ աւելի անախորժ։

Բանւորը աշխատում է պահպանել աշխատավարձի նախկին չափը, աւելացնելով իր աշխատանքը, այսինքն աշխատելով աւելի շատ ժամեր, կամ նոյնաժամանակամիջոցում աշխատելով պատրաստել աւելի շատ մթերքներ։

Այսպէս, կարիքից ստիպված նա աւելի ուժեղացնում է աշխատանքի բաժանման կորստաբեր հետևանքները։

Դրա հետևանքը լինում է այն, որ քանի շատ է աշխատում բանւորը, այնքան նա աւելի քիչ է ստանում այն հասարակ պատճառով, որ նա աւելի ուժեղ է մրցում իր ընկերների հետ, որոնք սկսում են առաջարկել իրանց աշխատանքը նոյն պայմաններով, ինչ պայմաններով նա է աշխատում։ Վերջ ի վերջոյ նա մրցում է ուրեմն ինքը իրան հետ, որպէս բանւոր դասակարգի անդամի հետ։

Մեքենայական արդիւնագործութիւնը *առաջ է բերում նոյնը, միայն աւելի մեծ չափով։ Նա սովորած բանւորներին փոխարինում է չսովորածներով, տղամարդկանց կանանցով, հասակաւորներին անչափահասներով։ Որտեղ նա մտնում է առաջին անգամ, բազմաթիւ բանւորներ շպրտւում են փողոց, իսկ այնտեղ, որտեղ նա աստիճանաբար է զարգանում, որտեղ մեքենաները հետզհետէ կատարելագործւում են, այնտեղ բանւորները զրկւում են աշխատանքից աստիճանաբար և մասմաս։ Վերևում մենք թռուցիկ կերպով նկարագրեցինք կապիտալիստների արդիւնաբերական պատերազմը. այս պատերազմն այն առանձնայատկութիւնն ունի, որ այստեղ յաղթութիւնը ձեռք է բերւում բանւորական բանակը ոչ թէ աւելացնելով, այլ ընդհակառակը՝ պակասեցնելով, իսկ բանւորական բանակի քչացնելու մէջ կապիտալիստները աշխատում են միմեանց գերազանցել արձակւած բանւորների քանակութեամբ։*

Էկոնոմիստներն հաստատացնում են մեզ իբր թէ մեքենայի շնորհիւ աւելորդ դարձած բանուորները պարապմունք են գտնում արդիւնագործութեան նոր ճիւղերում։

Նրանք չեն համարձակւում ուղղակի պնդել, որ այդ նոր ճիւղերում պարապմունք գտնում են հէնց այն բանուորները, որոնք արտաքսւում են ուրիշ տեղերից։ Փաստերը իսկոյնևեթ կապացուցէին նրանց սուտը։ Նրանք ասում են միայն, որ բանւոր դասակարգի ուրիշ մասեր, օրինակ երիտասարդ սերունդը, որ պատրաստւում էր մտնել կործանւած արդիւնագործութեան մէջ, կը գտնեն նոր պարապմունքի տեղեր։ Ի հարկ է, այդ հանգամանքը վերին աստիճանի մխիթարական է նրանց համար, որոնք մնացել են առանց գործի։ Պարոն կապիտալիստները պակասութիւն չեն զգայ բանուորական թարմ ոյժերի մէջ։ Բայց դա մի մխիթարանք է, որը բուրժուազիան ստեղծել է աւելի շատ իրան, քան բանուորների համար։ Չէ՞ որ սարսափելի կլինէր, եթէ մեքենայական արդիւնագործութիւնը ոչնչացնէր վարձու բանուորների ամբողջ դասակարգը, որովհետև առանց վարձու աշխատանքի կապիտալը կդադարէր կապիտալ լինելուց։

Բայց ենթադրենք թէ մեքենայի շնորհիւ անմիջապէս արտաքսւած բոլոր բանուորները և այն երիտասարդ սերունդը, որը մտածում էր այդտեղ գործ գտնել, գտել են նոր պարապմունքներ։ Մի՞թէ կարելի է մտածել, որ այդ նոր պարապմունքները նրանց կվարձատրեն նոյնպէս, որպէս նախկիններին։

Ոչ, սա կիսակատար տնտեսութեան բոլոր օրենքներին։ Մենք արդէն ծանօթ ենք ժամանակակից արդիւնաբերութեան տենդենցիայի հետ, որ ձգտում է աւելի բարդ և աւելի բարձր աշխատանքը փոխարինել աւելի պարզ և աւելի ցածր աշխատանքով։ Ու

արդիւնաբերութեան որևէ ճիւղից մեքենայի շնորհիւ արտաքսւած բանուորների ամբողջ մասսան կը գտնի ուրիշ, աւելի նւազ վարձատրւող աշխատանք։ Որպէս բացառութիւն այս օրէնքից, մատնացոյց էին անում այն բանուորների վրա, որոնք զբաղւած են նոյն այդ նոր մեքենաների պատրաստութեամբ։ Երբ մեքենայական արդիւնագործութիւնը սկսում է զարգանալ և ամեն տեղ մուտք գործել, պատրաստւող մեքենաների քանակութիւնը ընդհանրապէս պէտք է աւելանայ, իսկ դրա հետ պէտք է աւելանայ և այդ մեքենաները պատրաստող բանուորների թիւը, որոնք միևնոյն ժամանակ կազմում են բանւոր դասակարգի ամենաուսեալ, ինտելիգենտ և նոյնիսկ կրթւած խաւը։

Սկսած 1840 թ. այս պնդումը, որ առաջ էլ միայն մասամբ էր ճշմարիտ, կորցրել է ամեն մի հող։ Մեքենաներ պատրաստելիս նոյնպէս գործադրւում են մեքենաներ, ինչպէս և արդիւնագործութեան մէջ, և համեմատած այդ մեքենաների հետ ամենաճարպիկ բանուորների ոյժը նսեմանում է։

Բայց կարող է պատահել, որ մի դուրս արած բանուորի փոխարէն գործարանին կհարկաւորւի մի կին և երեք երեխայ։ Բայց մի՞թէ տղամարդու վարձատրութիւնը չպէտք է բաւականացնէր թէ կնկան և թէ երեխաներին։ Մի՞թէ աշխատավարձի մինիմումը չպէտք է բաւարարութիւն տար ցեղը պահպանելու և բազմացնելու պահանջին։ Միայն այն, որ այժմ մի ընտանիք պահելու համար հարկաւոր է 4 անգամ աւելի շատ բանուորական կեանք ծախսել, քան առաջ։

Ուրեմն ձևակերպենք վերև ասածները։ Որքան արագ է աճում արդիւնագործական կապիտալը, այնքան աւելի լայն գործադրութիւն են գտնում աշխատանքի բա-

ժանումը եւ մեքենաները։ Իսկ որքան լայն գործադրութիւն են ստանում աշխատանքի բաժանումն ու մեքենաները, այնքան աւելի ուժեղանում է մրցումը բանւորների միջ, այնքան աւելի ընկնում է աշխատավարձը։

Բացի դրանից բանւոր դասակարգին աւելանում են նաև հասարակութեան աւելի բարձր խաւերի անդամները. մանր գործարարները մասսան և մանր ռենտիէները ստիպված են լինում ցածրանալ մինչև բանւորութիւնը և նոյնպէս ձեռք կառկառել գործ գտնելու համար։ Այսպիսով գործ փնտռելու համար կառկառած ձեռքերի թիւը գնալով աւելանում է, իսկ այդ ձեռքերը աւելի նւազ ու նիհար են դառնում։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մանր արդիւնաբերողը չի կարող դիմանալ այն կուին, որի ամենառաջին պայմանն է արդիւնագործութեան մշտական լայնացումը, որովհետև դրա համար հարկաւոր է լինել խոշոր և ոչ թէ մանր արդիւնաբերող։

Բացառութեան կարօտ չէ նոյնպէս և այն հանգամանքը, որ կապիտալների ծաւալի աճելու հետ միասին պակասում է կապիտալի տոկոսը և որ այդ պատճառով մանր ռենտիէն անկարող է ապրել իր ռենտայով և ստիպված է դիմել որևէ արդիւնաբերական ձեռնարկութեան, այդպիսով լրացնելով մանր ձեռնարկողների՝ այսինքն ապագայ պրոլետարիատի շարքերը։

Վերջապէս, որ չափով կապիտալիստները, իրանց տրամադրութեան տակ գտնւած արդիւնագործութեան հսկայական միջոցների շահագործումը լայնացնելու անհրաժեշտութիւնից ստիպված՝ դիմում են կարելիին չափ վարկային ձեռնարկութիւնների, սկսում են յաճախ կրկնւել արդիւնաբերական ճգնաժամերը, որոնցից ա-

ռևտրական աշխարհը փրկւում է միմիայն զոհաբերելով իր հարստութեան, մթերքների և նոյնիսկ արդիւնաբերող ոյժերի մի մասը։

Այդ ճգնաժամերը ուժեղանում և աւելանում են արդէն այն պատճառով, որ մթերքների ընդհանուր քանակութեան, ուրեմն և շուկաները լայնացնելու պահանջի աճման հետ զուգընթացաբար աւելի ու աւելի է կըրճատւում համաշխարհային շուկան և աւելի պակասում է այն շուկաների թիւը, որ կարելի է նոր ձեռք գցել, որովհետև ամեն մի նախընթաց ճգնաժամ արդէն համաշխարհային առևտրի ոլորտի մէջ ձգած է լինում բոլորովին ձեռք չտւած, կամ թեթև ձեռք տւած առևտրական շուկաներ։

Բայց կապիտալիստը չէ բաւականանում միայն աշխատանքի հաշւին ապրելով։ Հնադարեան անասնի բարբարոս իշխանների նման նա իր հետ գերեզման է տանում իր ստրուկների դիակները, որոնք զոհ են գընում ճգնաժամերին։ Ուրեմն մենք տեսնում ենք հետևեալը.

Եթէ կապիտալն աճում է, մրցումը բանւորների միջ աճում է աննամեմատ աւելի արագ, այսինքն բանւորի համար պարապմունք գտնելը, գոյութեան միջոցներ ձեռք բերելը դժւարանում է. մինչ դեռ միեւնոյն ժամանակ կապիտալի արագ աճումը վարձու աշխատանքի համար ամենաբարեյաջող պայմանն է։

ՀՐԱՏ. ԸՆԿԵՐ. ,,ՍՏ. ԼՈՒՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.''

Սկսել է մի շարք թարգմանական գեղարուեստական մեծ գրուածքների հրատարակութիւն

«ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ»

ընդհանուր վերնագրի տակ

Թարգմանութեանը մասնակցում են առաջնակարգ ոյժեր.

ԱՌԱՋԻՆ ՎԵՑՀԱՏՈՐԵԱԿԻ

մէջ մտնում են հետեւեալ աշխատութիւններ.

1. Էրկման-Շատրիան—«ՄԻ ԳԻՒՂԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», վէպ 18-րդ դարի վերջին ֆրանսիական կեանքից գինը 1 ր. 25 կ.։
2. Վոյնիչ—«ԲՈՌ», վէպ երեսնական թուականների իտալական կեանքից, թարգմ. Շանթ, գինն է 1 ռ.
3. Վ. Ֆոն Պոլենց—«ԳԻՒՂԱՑԻ ԲԻՒՏՆԵՐԸ», վէպ ժամանակակից գերմանական կեանքից։
4. Էմիլ Զոլա—«ԺԵՐՄԻՆԱԼ կամ ԱԾԽԱՀԱՏՆԵՐ», վէպ ժամանակակից ֆրանսիական կեանքից։
5. Հաուպտման—«ԴՐԱՄԱՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ» (Կառապան Հենշէլ, Ջուլհակներ, Կրամպոն բարեկամը և այլն).
6. Կ. Է. Ֆրանցոզ.—«ՏԱՐԱՍ ԲԱՐԱԲՕԼԱ»,—վէպ երեսնական թուականների պոդոլեան ռուսինների կեանքից։

Ամբողջ հրատարակութիւնը կունենայ 2200—2400 մեծադիր երես։ Արդէն լոյս են տեսել I և II հ.։

«ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Թիֆլիսում 6 ռ., Թիֆլիսից դուրս ճանապարհա-
ծախսով 7 ռ.

Կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ—կանխավճար Թիֆ-
լիսում—1 ռ., Թիֆլիսից դուրս 2 ռ., մնացածը
ամեն հատոր ստանալիս Մէկ-Մէկ ռուբլի, վեր-
ջին 6-րդ հատորը—ձրի։

Լոյս տեսնելուց յետոյ վեցհատորեակը
կարժենայ 9 ռ.։

Բաժանորդ գրել կարելի է Թիֆլիսում «Կենտ-
րոնական» և «Գուտենբերգ» գրախանութներում
և «Հերմէս» տպարանում, Բագու «Сотрудникъ»
գրախանութում։

Ուրիշ քաղաքներից դիմել Ընկերութեանը

ՀՀ Ազգային գրադարան
NL0181245

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐՈՅԿՆԵՐ

1. Դեմիրչեան. Դ. *Ուխտաւորներ, Աշուղի հէքիաթը. պատմուածքներ* . . . . 7 կ.
2. Վերեսաեւ Վ. *Մի անմեղ մարդու սոսկալի մահը, թարգմ. Գ. Գուշեան* . . . . 6 կ.
3. Շիսեանց Ս. *Մի մահ և Անտառակը. պատմուածքներ* 7 կ.
4. Երկման-Շատրիանցից *Ժամագործի յիշողութիւնները, թարգմ. Շուշ. Խաժակեան* . . 8 կ.
5. Գրոֆ. Վ. *Զօմբարս. Ինչու այժմ ամեն մարդ հետաքրքրւում է քաղաքատնտեսական և ընկերավարչական խնդիրներով, թարգ. Ս. Թառայեան* 10 կ.
6. Յովհաննէս Գասելկի. *Կապիտալ և Կապիտալիսմ* 12 կ.
7. Գրոֆ. Թ. Ախելիս. *Իրաւունքի ծագումը և պատմութիւնը, թարգ. Ս. Թառայեան* . . 12 կ.
8. Կարլ Մարքս, *Վարձու աշխատանք և կապիտալ գինը* . . . . . 10 կ.

ՀԷՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

պատկերազարդ սերիա

1. Ղազ. Աղայեանի. *Գիւլնազ-տատի հէքիաթը, Այծատուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Խան* 15 կ.
2. Ղազ. Աղայեանի. *Եղեգնուհի, Անտառի մանուկը, Ասլան-Բալա* . . . 15 կ.

Կազմած երկուսը միասին 45 կ.

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

1. Յովհ. սեր. Թումանեանի *Սասունցի Դաւիթը* 15 կ.
2. » » *Անուշ* . . 15 »
3. » » *Լեգենդներ* . . 15 »
4. Շարբի . *Լեռան աղջիկը* . 15 »
5. » » *Երգեր* . . . 15 »

Օր. Հեղինէ Մելիք-Հոյկազեանի՝ *Մի պատմ ճապոնուհի. 25 պատկերով* . 40 կ.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Товарищество «Ст. Лисициянъ К°». (Бебутовская ул. 25) և Типографія «Гермесъ» (Мадатовская ул. 15).